

## Աուդիտի առանցքային հարց-ձաճախորդներին տրված վարկերի ակնկալվող պարտքային կորուստ

Տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի գնահատումը ղեկավարության համար հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա:

Ծանոթագրություն 12-ում ներկայացված են ձաճախորդներին տրված վարկերը, որոնք կազմել են 6,295 մլն դրամ 31 դեկտեմբեր 2020թ.-ի դրությամբ (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,839 մլն դրամ): ձաճախորդներին տրված վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը հանդիսանում է աուդիտի առանցքային հարց վարկերի գումարի նշանակալի լինելու (Ընկերության ընդհանուր ակտիվների 82.8%՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, և 87.9%՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) և արժեզրկման գնահատման հիմքում ընկած ենթադրությունների սուբյեկտիվության պատճառով:

Արժեզրկման բացահայտումն ու փոխհատուցվող գումարի որոշումն իր բնույթով անորոշ գործընթաց է (տես Ծանոթագրություն 4), որը ներառում է տարբեր ենթադրություններ և գործոններ: Ընկերության վարկային պորտֆելը կազմված է նույնատիպ հիպոթեքային վարկերից, ինչի հետևանքով Կազմակերպությունը վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը գնահատում է հավաքական հիմունքով:

Ակնկալվող դրամական հոսքերը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է հավաքագրման պատմական գործակիցները՝ հիմնվելով միգրացիոն աղյուսակների տվյալների վրա: Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների պահուստի հաշվարկման համար կիրառվող մոդելը ներառում է նախորդ հինգ տարիների պատմական տվյալները, հավաքագրումների պատմական փորձը և գործընկերոջ ֆինանսական վիճակի, ապագա դրամական հոսքերի, գրավի իրացման գուտ գների և իրացման ժամանակահատվածի վերաբերյալ ակնկալիքները: Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել վարկերի արժեզրկման գծով պահուստի գնահատման էականորեն տարբեր արդյունքների: Սա կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական արդյունքների վրա:

Մենք անդրադարձել ենք այս հարցին հետևյալ ընթացակարգերի իրականացման միջոցով.

- Մենք գնահատել և ստուգել ենք վարկերի արժեզրկված լինելը բացահայտելու համար նախատեսված վերահսկողության մեխանիզմների կառուցվածքը և կիրառումը: Անհատապես նշանակալի վարկերի համար մենք դիտարկել ենք մշտադիտարկման գործընթացը վերահսկող մեխանիզմները:
- Անհատապես նշանակալի վարկերի համար՝ վարկերի ընտրանքի համար իրականացրել ենք վարկային գործի ուսումնասիրություն, որոշելու համար, թե արդյոք վերջիններիս դասակարգումն արժեզրկված/ոչ արժեզրկված դասերի ճիշտ է:
- Որպես արժեզրկված դասակարգված վարկերի համար գնահատել ենք վերականգնման ենթակա դրամական միջոցների ժամկետները և գումարը, այդ թվում՝ գրավի իրացման արժեքը: Կիրառելի լինելու դեպքերում, մենք ղեկավարության ենթադրությունները և գնահատումները համեմատել ենք արտաքին աղբյուրներից հասանելի տեղեկատվության հետ:
- Անհատներին տրված վարկերի համար՝ ստուգել ենք հավաքական հիմունքով արժեզրկման գծով պահուստի գնահատման ստուգելի մուտքագրված էլակետային տվյալների ճշգրտությունը, գնահատել ենք արժեզրկման հաշվարկի մեթոդաբանության նպատակահարմարությունը, ստուգել ենք ժամկետանց օրերի ճշգրտությունն ընտրանքային կարգով ընտրված վարկերի համար,
- Գնահատել ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները պատշաճ կերպով են արտացոլում Ընկերության ենթարկվածությունը պարտքային ռիսկին:
- Հավաքական հիմունքով ակնկալվող պարտքային կորուստների պահուստի գնահատման համար կիրառված վարկային ռիսկի մոդելների և ենթադրությունների ստուգում, այդ թվում՝ մենք դիտարկել ենք Ընկերության կողմից օգտագործվող մոդելը՝ ուսումնասիրելով վարկերի միգրացիոն աղյուսակները՝ ժամկետանց օրերի վերաբերյալ տվյալների հիման վրա:

Այդ նպատակով ստուգել ենք մոդելներում կիրառված ընտրանքային տվյալներ, ինչպիսիք են միգրացիոն աղյուսակներում օգտագործված ժամկետանց օրերի քանակը:

- Մենք գնահատել ենք, թե արդյոք մոդելավորման մեջ կիրառված ենթադրությունները հաշվի են առնում բոլոր առնչվող ռիսկերը, և թե արդյոք չմոդելավորված ռիսկերը ներկայացնելու նպատակով կիրառված հավելյալ ճշգրտումները հիմնավորված են: Եթե պահուստի գնահատման ժամանակ, մեր կարծիքով, հնարավոր էր կիրառել առավել համապատասխան ենթադրություն կամ տվյալ, ապա պահուստը վերահաշվարկել ենք ըստ այդմ և համեմատել դրանք ղեկավարության հաշվարկների հետ, որպեսզի հավաստիանանք, որ ղեկավարության կատարած հաշվարկների միջև չկա կողմնակալություն:
- Մենք գնահատել ենք բացահայտումների համապատասխանությունը և ամբողջականությունը:

### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք սխալի զրոյի խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշությունն ղեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցված հարցերից, որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և հետևաբար աուդիտի առանցքային հարցեր են: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտորի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, եթե խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Մուսաբեկյան  
Տնօրեն



Գնել Խաչատրյան  
Աուդիտի ղեկավար

9 ապրիլի 2021թ.

**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ**

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	Ման.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	726,584	740,707
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	5	(407,985)	(405,080)
<b>Զուտ տոկոսային եկամուտ</b>		<b>318,599</b>	<b>335,627</b>
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		2,394	3,072
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(1,208)	(1,457)
Արտարժույթային գործարքներից ստացված զուտ օգուտ		30,433	1,692
Այլ գործառնական եկամուտ		16,527	18,694
<b>Գործառնական եկամուտ</b>		<b>366,745</b>	<b>357,628</b>
Վարկերից և այլ ակտիվներից առաջացած (վնաս)/օգուտ, զուտ	6	(27,705)	21,659
Անձնակազմի գծով ծախսեր	7	(130,565)	(137,332)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	8	(88,268)	(85,779)
<b>Շահույթ մինչև հարկվելը</b>		<b>120,207</b>	<b>156,176</b>
Շահութահարկի գծով ծախս	9	(15,133)	(34,843)
<b>Շահույթ հարկումից հետո</b>		<b>105,074</b>	<b>121,333</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
<b>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>105,074</b>	<b>121,333</b>

*Ֆինանսական հաշվետվությունները (էջ 7-54) հաստատվել են «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ ղեկավարության կողմից 2021թ. ապրիլի 9-ին, ստորագրությամբ՝*

Գլխավոր տնօրեն  
Դավիթ Աթանեսյան



Գլխավոր հաշվապահ  
Գայանե Կորեկյան

**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ**

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Օան.	31 դեկտեմբեր 2020թ. հազ. դրամ	31 դեկտեմբեր 2019թ. հազ. դրամ
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	10	161,636	308,135
Բանկերում տեղաքաշխված միջոցներ	11	785,870	238,694
Ներդրումներ		3,680	3,680
Հաճախորդներին տրված վարկեր	12	6,294,715	6,838,686
Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ	13	303,062	326,223
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ	16	24,270	26,966
Ընթացիկ հարկային ակտիվ		12,144	18,636
Այլ ակտիվներ		15,106	16,899
		<hr/>	<hr/>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>7,600,483</b>	<b>7,777,919</b>
		<hr/> <hr/>	<hr/> <hr/>
<b>Պարտավորություններ</b>			
Ներգրավված վարկեր, փոխառություններ	14	5,388,012	6,051,575
Թողարկված պարտքային արժեթղթեր	15	518,012	-
Վարձակալության գծով պարտավորություն	16	26,379	28,102
Հետաձգված հարկային պարտավորություն	17	13,587	29,429
Այլ պարտավորություններ	18	33,121	31,265
		<hr/>	<hr/>
		<b>5,979,111</b>	<b>6,140,371</b>
<b>Կապիտալ</b>			
Կանոնադրական կապիտալ	19	1,000,000	1,000,000
Կուտակված շահույթ		621,372	637,548
		<hr/>	<hr/>
		<b>1,621,372</b>	<b>1,637,548</b>
		<hr/>	<hr/>
<b>Ընդամենը պարտավորություններ և կապիտալ</b>		<b>7,600,483</b>	<b>7,777,919</b>
		<hr/> <hr/>	<hr/> <hr/>

**«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ**  
**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն**  
**2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ստացված տոկոսներ	721,096	745,109
Վճարված տոկոսներ	(410,108)	(408,945)
Ստացված կոմիսիոն գումարներ	2,394	3,359
Վճարված կոմիսիոն գումարներ	(1,208)	(1,457)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	(453)	8,395
Այլ ստացված եկամուտ	16,526	18,407
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(128,203)	(135,711)
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(60,496)	(58,487)
Բանկերում տեղաբաշխված միջոցների (ավելացում)/նվազում	(780,122)	2,026
Հաճախորդներին տրված վարկերի (ավելացում)/նվազում	816,716	96,957
Այլ ակտիվների (ավելացում)/նվազում	(11,229)	(4,399)
Այլ պարտավորությունների (ավելացում)/նվազում	(1,090)	32,067
Վճարված շահութահարկ	(24,484)	(45,530)
<b>Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>139,339</b>	<b>251,791</b>
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,916)	(1,685)
<b>Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(1,916)</b>	<b>(1,685)</b>
<i>Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Վարկերի, փոխառությունների ավելացում	832,811	2,670,752
Վարկերի, փոխառությունների մարում	(1,776,860)	(2,231,760)
Պարտատոմսերի ավելացում/(մարում)	486,636	(339,012)
Շահաբաժինների վճարում	(121,250)	-
Վարձակալության գծով վճարներ	(4,456)	(4,456)
<b>Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր</b>	<b>(583,119)</b>	<b>95,524</b>
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/ (նվազում)	(445,696)	345,630
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	58,072	(407)
Պահուստավորման ազդեցություն	2,431	(2,025)
<b>Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում</b>	<b>546,829</b>	<b>203,631</b>
<b>Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում (ծնթ. 10)</b>	<b>161,636</b>	<b>546,829</b>

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
01.01.2020թ. դրությամբ <i>Համապարփակ եկամուտ</i>	1,000,000	637,548	1,637,548
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	105,074	105,074
Շահաբաժիններ	-	(121,250)	(121,250)
31.12.2020թ. դրությամբ	1,000,000	621,372	1,621,372
01.01.2019թ. դրությամբ <i>Համապարփակ եկամուտ</i>	1,000,000	516,215	1,516,215
Շահույթ ժամանակաշրջանի համար	-	121,333	121,333
31.12.2019թ. դրությամբ	1,000,000	637,548	1,637,548

## ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՄՊԸ խորհրդին*

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը համաձայն՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք ՀՄԷՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

### Առանցքային աուդիտորական հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն՝ առավել նշանակալի էին ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում, այդ թվում՝ այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրուման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում՝ ստորև ներկայացված հարցերը դիտելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար: